



67 (251). ՅԵՐԴՈՒՄ

Գող քուրդ մե կէրթա մրտ շեխ: Շեխ ձեռք կը քսե քրդու չերես,
քուրդ կը մտնա թարիխ¹, չերդում կուտե օր՝ ինչ օր դողութենի մալ
է, ուր դոնով պտի չը մտնա:

Ինք դողութենի թարկ կիտա, տղեն կըսկսի: Էն մեկ օր՝ տղեն
չիսուն-վացսուն գողածուրիկ օշխար կը բերե, կը կանգըցու դուռ:
Թարիխ մտած պապ կըսե.

— Լո՛, լո՛, լա՛ո, ինչ քոռաֆամն իս, շուտ գբահ ու քլունգ վեր-
յու, դախոռի չետե ծակե, օշխար քշե ներս. խո էդ լե իմ դոնով չէ.
օր իմ չերդում ավրի:

¹ Ուղիղ ճանապարհ մտնել, մոլորությունից ձեռք քաշել (Մ. Բ.):

